ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՀԱՅ ԼՈԲԲԻՆԳԸ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Հայկարամ Նահապետյան

2007թ. տարեսկզբից, Միացյալ Նահանգների Կոնգրեսում Հայոց ցեղասպանության օրինագծի առաջքաշման պայմաններում, Թուրքիան և նրա «կրտսեր եղբայր» Ադրբեջանը զգալի աշխատանք տարան փաստաթղթի վերջնական հաստատումը խոչընդոտելու ուղղությամբ: Տարեվերջին օրինագիծը հաստատված է Կոնգրեսի Ստորին պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի մակարդակով: Վերին պալատում շրջանառվող նույնանման փաստաթուղթը դեռևս չի քննարկվել: Ներկայացուցիչների պալատի լիագումար նիստին օրինագծի քննարկումը ևս ժամանակավորապես հետաձգվել է: 2007թ. հունվարի 30-ին, երբ կոնգրեսականներ Ա.Շիֆը, Ֆ.Փալոնը, Ջ.Ռադանովիչը և Ջ.Նոլենբերգը փաստաթուղթը ներկայացրին Կոնգրես, Թուրքիայի լրատվամիջոցներում գրեցին, թե 2007թ. ապրիլի 24-ի դրությամբ այն կարող է հաստատված լինել: Ու թեև մոլորակի «թիվ 1» գերտերությունում փաստաթղթի առաջադիմումը օբյեկտիվորեն խիստ դրական իրողություն է և լիագումար նիստին հարցի քննարկումն ու հաստատումը մնում է բավական իրատեսական հեռանկար, արձանագրենք, որ 2007թ. ընթացքում Անկարային (և Բաքվին) հաջողվեց «տարկետում» շահել: Այսպիսով, հայկական օրինագծի առաջքաշումը, բացի իր ուղղակի խնդրից, որ վերաբերում է պատմական արդարության վերականգնմանը և Հայաստանի արտաքին քաղաքական կուրսի առաջընթացին, ունեցավ նաև մեկ այլ՝ կողմնակի «էֆեկտ». հնարավորություն տվեց ուսումնասիրել և առավել հստակ պատկերացում կազմել ԱՄՆ-ում թուրք-ադրբեջանական երկյակի լոբբիստական և քարոզչական աշխատանքի, նրանց հնարավորությունների, ռեսուրսների և հետագա ծրագրերի մասին:

1. Միացյալ Նահանգների թուրքական կազմակերպությունները

Միացյալ Նահանգների թուրքական ոչ կառավարական կազմակերպություններն ունեն հասարակական, մշակութային, գիտական, սպորտային, երիտասարդական, ուսանողական ուղղվածություններ: Ըստ առկա տվյալների, 2007թ. փետրվարի դրությամբ ԱՄՆ-ում գործում են 136 թուրքական

հասարակական կազմակերպություններ 27 նահանգներում: Առավելագույն թվով կառույցներ գործում են Նյու Յորքում՝ 27, Վաշինգտոնում՝ 18, Նյու Ջերսիում՝ 17 և Կալիֆոռնիայում՝ 15: Թուրքական կառույցներ են գործում նաև ԱՄՆ հայաշատ նահանգներում: ԱՄՆ թուրքական հաստատություններից հայտնի են՝

- Լոս Անջելեսի թուրք-ամերիկյան ասոցիացիա,
- Կալիֆոռնիայի թուրք-ամերիկյան ասոցիացիա,
- Հարավային Կալիֆոռնիայի ամերիկաբնակ թուրքերի ասոցիացիա,
- Աթաթուրքի դուստրեր (Կալիֆոռնիա),
- Անատոլիայի բարեկամներ (Կալիֆոռնիա),
- «Թյուրքօջաղը» միություն (Նյու Ջերսի),
- Ստամբուլի տեխնիկական համալսարանի շրջանավարտների միություն (Նյու Ջերսի),
- Երիտասարդ թուրքերի մշակութային օգնության միություն (Նյու Յորք),
- Ճարտարապետների, ինժեներների և գիտնականների թուրք-ամերիկյան ասոցիացիա (Նյու Յորք),
- Միացյալ Նահանգների թուրք-ամերիկյան բարեկամության միություն (Փենսիլվանիա) [1]:

Միացյալ Նահանգներում առկա են թուրքական 2 միություն, որոնցում մեկտեղված են տասնյակ թուրքական հասարակական, մշակութային, գիտակրթական կազմակերպություններ: Այս 2 միությունները յուրօրինակ «հովանու» դեր են կատարում՝ որոշակի «համադաշնություն» հանդիսանալով, որ միավորում են տասնյակ «ցիրուցան» կառույցներ: Ներհամայնքային կազմակերպման այս մեթոդը բավական տարածում ունի: Թուրքական 2 միավորող «հովանի»-կառույցներն են *ATAA-ն* և *FTAA-ն:*

ATAA (Assambley of Turkish-American Associations) «Թուրք-ամերիկյան միությունների համագումար» կազմակերպությունն առավել ծավալված և կայացած է, հանդես է գալիս որպես ԱՄՆ-ում թուրքական շահերի պաշտպանության և լոբբինգի խոշորագույն համայնքային ուժ: *ATAA-ի* կենտրոնական գրասենյակը Վաշինգտոնում է: Կառույցը հիմնադրվել է 1967թ. Վաշինգտոնում գործող Ամերիկա-թուրքական ասոցիացիայի և Մերիլենդի ամերիկա-թուրքական միության կողմից: 1980թ. տեղի է ունեցել *ATAA-ի* առաջին ընդլայնված նիստը, որին մասնակցել են ԱՄՆ-ում գործող 26 թուրքական կազմակերպություն, որից հետո ընդլայնված նիստերը ստացել են ամենամյա բնույթ: Ներկայումս *ATAA-ն* միավորում է 62 հասարակական, մշակութային, գիտակրթական թուրքական կառույց, որոնցից 58-ը գտնվում են Միացյալ Նահանգներում, 2-ը՝ Կանադայում,

իսկ 2-ը բուն Թուրքիայում՝ Անկարա և Իզմիր քաղաքներում գործող Թուրք-ամերիկյան միություններ են: *ATAA-ի* մեջ մտնող թուրքական միություններ են գործում ԱՄՆ 27 նահանգներում, առավելագույն քանակով՝ Նյու Ջերսիում, ուր գրանցված են 9 թուրքական *NGO,* Նյու Յորքում՝ 7, Կալիֆոռնիայում՝ 5 [2]:

ATAA-ի ղեկավարն է գործարար Նուրթեն Ուրալը: Նա *«Ural Interiors»* դիզայներական ընկերության ղեկավարն է, բնակվում է Դեթրոյթում (Միչիգան): Ն.Ուրալը Դեթրոյթի Արվեստի ինստիտուտի տնօրենների խորհրդի անդամ է, միաժամանակ և Դեթրոյթում Թուրքիայի պատվո հյուպատոսն է: *ATAA-ի* նախագահությունը ստանձնել է 2006թ. նոյեմբերի 12-ից, ըստ գործող կանոնակարգի՝ 2 տարով: Փոխարինել է Վուրալ Ջենգիզին, որը պաշտոնավարել է 2004-2006թթ.: Վերջինս ծնվել և մինչև 1986թ. բնակվել է Թուրքիայում: Ավելի վաղ՝ 2002-2004թթ., կառույցը ղեկավարում էր Էրջյումենթ Քըլըչը: Թե՛ Ջենգիզը և թե՛ Քըլըչը շարունակում են աշխատել *ATAA-ի* կազմում: Կառույցի հաջորդ ղեկավարն է լինելու Գյունայ Էվինչը, որ կպաշտոնավարի 2008-2010թթ.: Ղեկավար անդամներից են նաև Օյա Բեյինը (ծնունդով Թուրքիայից), աղրբեջանցի գործարար Ջեյհուն Մոլլազադեն, ամերիկուհի Բոնի Ջոյ Կասլանը, որն էթնիկ թուրքի այրի է [2]: Նա նաև «Անատոլիայի բարեկամներ» ամերիկա-թուրքական կազմակերպության անդամ է, Թուրքիայի պատվո հյուպատոսն է Սան Ֆրանցիսկոյում, արժանացել է «Աթաթուրքի դուստրեր» հասարակական կազմակերպության մրցանակին [3]:

ATAA-ն 1989-2003թթ. հրատարակել է «Թըրքիշ Թայմս» անգլիալեզու թերթը, որ լույս էր տեսնում ամիսը 2 անգամ (էլեկտրոնային կայք՝ www.turkishtimes.com): 1996-ից տպագրվում է «Թըրքիշ պանորամա» պարբերականը՝ հիմնականում ԱՄՆ Կոնգրեսում, ԱՄՆ քաղաքական գործիչների շրջանում բաժանելու նպատակով: Տարին 4 անգամ լույս է տեսնում «Թըրքիշ ամերիքըն» հանդեսը: Կազմակերպության տարեկան բյուջեն կազմում է $300 հազար [4, p. 229]:

Որպես *ATAA-ի* գործունեության նպատակներ նշվում են՝

- ԱՄՆ-ում բնակվող թուրքերի շրջանում շփումների ակտիվացմամբ համայնքային կառուցվածքի ամրապնդումը,
- ԱՄՆ-ում Թուրքիայի պատմությանը, մշակույթին, սովորույթներին ծանոթացնելը, Միացյալ Նահանգներում Թուրքիայի վերաբերյալ դրական վարկանիշի ձևավորմանը նպաստելը,
- ԱՄՆ կառավարության կազմում, Կոնգրեսում և լրատվամիջոցներում խմբի ձևավորումը, որը ճնշում կբանեցնի թուրք-ամերիկյան հարաբերությունների զարգացման համար,

- *Թուրքիայի և թուրք մարդու վերաբերյալ սխալ և նսեմացնող քարոզչությանը և գործունեությանը հակադրվելը* (ընդգծումը՝ *Հ.Ն.)* [4, p. 228]:

Նախավերջին և հատկապես վերջին կետերն ուղղակի կապ ունեն Հայկական հարցում Թուրքիայի վարած ժխտողական քաղաքականության հետ: *ATAA-ն* առավելագույն ակտիվություն է ցուցաբերում Հայոց ցեղասպանության օրինագծերի դեմ պայքարի հարցում: Նույն կետի շրջանակում *ATAA-ն* աշխատում է նաև հունական և քրդական կազմակերպությունների քարոզչական, հասարակական-քաղաքական բնույթի նախաձեռնությունները չեզոքացնելու կամ դրանց խոչընդոտելու նպատակով, առաջ է մղում Թուրքիայի շահերը Կիպրոսյան կամ Իրաքյան հիմնախնդիրներում: Մասնավորապես, *ATAA* կառույցի նախաձեռնությամբ ԱՄՆ Կոնգրեսի թուրքական հարցերով հանձնախմբի անդամներ Ռոբերտ Ուեքսլերը, Էլսի Հեյսթինգսը և Էդ Ուիթֆիլդը ընթացիկ տարվա նոյեմբերի 7-ին առաջ քաշեցին օրինագիծ, որով դատապարտվում էին ՔԲԿ գործողությունները Թուրքիայի դեմ: Բանաձևը կողմերին կոչ էր անում «դիմել կոնկրետ քայլերի՝ ՔԲԿ կազմակերպությունն արմատախիլ անելու նպատակով»: Սա համահունչ է Անկարայի պաշտոնական դիրքորոշմանը, ներդաշնակում է Իրաքի հյուսիսին ռազմական հարվածներ հասցնելու Թուրքիայի սպառնալիքներին: Հայտարարությամբ հանդես էր եկել նաև *ATAA-ի* նախագահ Ուրալը՝ ողջունելով կոնգրեսականների քայլը և հայտարարելով, թե «Թուրքիան ենթարկվում է ՔԲԿ-ի ագրեսիային» [5]:

2007թ. փետրվարին *ATAA* կազմակերպությունից անջատված մի խումբ հիմնադրեց «ԱՄՆ թուրքական կոալիցիա» *(Turkish Coalition of America)* կառույցը: *ATAA-ի* հետ հակասությունները վերաբերում էին Թուրքիայի իսլամական վարչակարգի հանդեպ մոտեցումներում առկա տարբերություններին. ըստ առկա տեղեկությունների՝ *ATAA-ից* հեռացածներն առավել անհանդուրժող են Էրդողան-Գյուլի վարչակարգի նկատմամբ: «ԱՄՆ թուրքական կոալիցիան» գլխավորում է ամերիկացի Լինքոլն Մըք-Քարդին, տեղակալներն են՝ Գյուլեր Քոքնարը և Քերոլ Էն Ջեքսոնը [6]: Կենտրոնակայանը Վաշինգտոնում է: Կառույցը զբաղվում է ԱՄՆ թուրքական համայնքի երիտասարդ անդամների քաղաքական դաշտ մուտք գործելու նախագծերով, այս նպատակով մշակել է դրամաշնորհային ծրագրերի համակարգ, իրականացնում է քարոզչական և *PR* բնույթի գործողություններ:

Համաամերիկյան ձևաչափով հանդես եկող մյուս թուրքական կառույցն է *FTAA-ն (Federation of Turkish American Associations)* ՝Թուրք-ամերիկյան կազմակերպությունների համադաշնությունը: *FTAA-ի* կենտրոնակայանը նույնպես Վաշինգտոնում է: *FTAA-ն* առավել վաղ է հիմնադրվել,

քան «զուգահեռ» գործող *ATAA-ն*՝ 1956թ.: Այն ներառում է 37 կազմակերպություն, որոնց մեծ մասը մտնում է նաև *ATAA-ի* մեջ [7]: Կառույցի նախագահն է Աթիլա Փաքը, որը 2006թ. հունվարին փոխարինել է Աթա Էրիմին: Ա.Փաքը ծնունդով Թուրքիայից է, ԱՄՆ փոխադրվել է 1995-ին: Բնակվում է Նյու Ջերսիում, ավտոճանապարհային ինժեներ է: 2003-2005թթ. հանդիսացել է *FTAA-ի* գլխավոր քարտուղարը: Փոխնախագահն է Շինասի Քյոշեն, գլխավոր քարտուղարը՝ Ֆարուք Աջարը [7]:

Գործող նախագահը հակասությունների մեջ է Ֆարուք Աջարի, ղեկավար այլ անդամների հետ, առկա է դատական վեճ, որ ծավալվել է 2006-ից: Այս փաստը և *ATAA-ի* երկփեղկման իրողությունը թուրքական մամուլում քանիցս բացասական արձագանք է գտել: Թուրքիայի ԶԼՄ-ում նշվում էր, թե այն պայմաններում, երբ ԱՄՆ օրակարգում էր Հայկական հարցը, թուրքական միություններն իրենց ժամանակը և ռեսուրսները վատնում են ներքին «խժդժությունների» վրա: «Ինչո՞վ են զբաղվում հայկական օրինագծի դեմ պայքարելու կոչված ԱՄՆ թուրքական կառույցները»,- հարցնում է թուրք վերլուծաբաններից մեկը և պատասխանում՝ «…ներքին պայքարով: *FTAA-ի* ղեկավարներն իրար են դատում» [8]:

1981-ից սկսած՝ *FTAA-ն* յուրաքանչյուր տարվա մայիսի 19-ին՝ Թուրքիայի անկախության պատերազմի տարեդարձի օրը, Նյու Յորքում կազմակերպում է քայլերթ, որը համարվում է ԱՄՆ-ում խոշորագույն թուրքական հասարակական նախաձեռնությունը: 1991թ. *FTAA* կազմակերպության նախաձեռնությամբ հիմնվեց Համաշխարհային թուրքական կոնգրես *(World Turkish Congress)* կազմակերպությունը, որի նպատակն է մեկ ընդհանուր միության մեջ միավորել Թուրքիայից դուրս գործող թուրքական համայնքային հաստատությունները: Ներկայումս Համաշխարհային թուրքական կոնգրեսի գործունեությունը գերազանցապես սահմանափակվում է տեղեկատվական-քարոզչական բնույթի էլեկտրոնային տեղեկագրերի տարածմամբ: Այս տեղեկագրերը վերաբերում են, մասնավորապես, ԱՄՆ-ում ու եվրոպական պետություններում թուրքական համայնքային զարգացումներին, տվյալ պետության հետ իրենց փոխհարաբերություններին, Թուրքիայի համար կենսական կարևորություն ունեցող խնդիրների շուրջ Եվրոպայում տեղ գտնող գործընթացներին՝ Թուրքիա-ԵՄ հարաբերություններ, Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնախնդիր, Քրդական հարց և այլն: Պետք է նշել, որ տեղեկատվության փոխանակման գործը, մասնավորապես՝ եվրոպական երկրների թուրքական միությունների հետ, արդեն բավական համակարգված է, և Համաշխարհային թուրքական կոնգրեսն ընդհանուր առմամբ իրազեկ է եվրոպական շատ երկրներում տեղի ունեցող կարևոր զարգացումներին: Այս առումով հստակ է, որ կատարվել է աշխատանք տեղեկատվու-

թյան փոխանակման մեխանիզմի հաստատման ուղղությամբ:

Միացյալ Նահանգներում գործում են նաև ԱՄՆ թուրքական համայնք *(ATS),* Թուրքական հետազոտությունների ինստիտուտ *(ITS),* Թուրք-ամերիկյան գիտաշխատողների միություն *(ATAS),* Թուրք-ամերիկյան իսլամական դաշինք *(TAIF),* Ամերիկա-թուրքական խորհուրդ *(ATC),* Թուրքիայի ամերիկացի բարեկամներ *(AFOT),* Թուրք-ամերիկյան բարեկամության միություն *(ATFA),* Ամերիկա-թուրքական գործարար միություն, «Ռեյին դրոփ» և այլ կառույցներ [9, p. 221; 10]:

ATS (American Turksh Society) «ԱՄՆ թուրքական համայնք կառույցը» Միացյալ Նահանգների հնագույն թուրքական կազմակերպությունն է: Հիմնադրվել է 1949թ. հունիսի 29-ին Նյու Յորքում: Ներկայումս կազմակերպության ղեկավարն է գործարար Մուրադ Քյոփրյուլյուն: Նա ֆինանսական կոնսալտինգի և անշարժ գույքի առքուվաճառքով զբաղվող *MFI* ընկերության նախագահն է, 1980-1986թթ. աշխատել է Համաշխարհային բանկում [11]: 2007թ. սեպտեմբերին *ATS-ին* միացան և կառույցի վարչական խորհրդի անդամներ դարձան ԱՄՆ թուրքական համայնքի մի քանի խոշորագույն ներկայացուցիչներ՝ «Կոկա Կոլա» ընկերության նախագահ Մուհթար Քենթը, *«JP Morgan Turkey»* ընկերության նախագահ Մուրաթ Մեգալին և մթերային խանութների ցանցի սեփականատեր Հալուք Դինջերը [12]:

Թուրքական հետազոտությունների ինստիտուտը *(Institute for Turkish Studies - ITS)* հիմնադրվել է 1982թ. Վաշինգտոնում: Ներկայիս ղեկավարն է պրոֆեսոր Սաբրի Սայարը: Կառույցը գերազանցապես զբաղվում է ԱՄՆ գիտակրթական հաստատություններում թուրքագիտական ամբիոնների հիմնադրման աշխատանքով, ինչն, ըստ թուրք վերլուծաբանի, իրականացվում է Թուրքիայի կառավարության հովանավորությամբ: ԱՄՆ-ում գործող լոբբիների ոլորտում մասնագիտացող թուրք փորձագետ Թայար Արբն նշում է. *«ITS-ը* Միացյալ Նահանգների տարբեր համալսարաններում ամբիոնների հիմնադրման համար գործակցում է Թուրքիայի կառավարության հետ: Թուրքիայի կառավարության ջանքերի արդյունքում ամբիոններ են հիմնադրվել Ջորջթաունի, Փրինսթոնի, Հարվարդի, Չիկագոյի, Ինդիանայի, Պորտլանդի համալսարաններում: Այս ամբիոնները հնարավոր եղավ հիմնադրել Թուրքիայի իշխանությունների, ԱՄՆ-ում բնակվող թուրքական համայնքի և նշված համալսարանների համատեղ ջանքերով: Բացի այդ, Կալիֆոռնիա, Կոլումբիա, Միչիգան, Նյու Յորք, Օհայո, Փենսիլվանիա, Տեխաս, Յուտա նահանգների և Վաշինգտոնի համալսարաններում բացվել են թուրքագիտական կենտրոններ և բաժիններ» [9, p. 230]:

Այս մեջբերումը հերթական վկայությունն է, որ Անկարան անմիջականորեն աշխատում է սեփական լոբբիստական կազմակերպությունների

հետ, հարկ եղած դեպքում, նաև՝ ուղղորդում: Հավելենք, որ *ITS-ի* բյուջեն մինչև վերջերս կազմում էր տարեկան $2 մլն, ինչն անհնար է, որ գոյանար համայնքային նվիրատվությունների հաշվին և վկայում է Թուրքիայի պետական գանձարանից ուղղակի հատկացումների մեծ հավանականության մասին: *ITS-ի* աշխատանքի արդյունքում ԱՄՆ-ում թուրքագիտական թեմայով տասնյակ աշխատություններ են հրատարակվել, որոնք առնչվում են Թուրքիայի արտաքին քաղաքականությանը, տնտեսությանը, պատմությանը, ինչպես նաև Հայկական հարցին [9, pp. 230-231]:

ATC - ԱՄՆ թուրքական խորհուրդ *(American Turkish Counsil)* կազմակերպությունը գործում է 1994-ից, Վաշինգտոնում: Կառույցի ղեկավարն է Ֆրեդ Հեյնսը, որը նաև ղեկավարում է *AFAT*՝ Թուրքիայի ամերիկյան բարեկամներ *(American Friends of Turkey)* կազմակերպությունը, որը զբաղվում է քարոզչությամբ, Թուրքիայի օգտին *PR* ակցիաներ կազմակերպելու աշխատանքներով: Բուն *ATC-ն* զբաղվում է թուրք-ամերիկյան տնտեսական և պաշտպանական ոլորտներում համագործակցության խորացման հարցերով: *ATC-ն* յուրաքանչյուր տարի կազմակերպում է 4-օրյա համաժողով, որին մասնակցում են առևտրի, հեռահաղորդակցության, էներգետիկայի, բեռնափոխադրումների, գիտության, ռազմական արդյունաբերության, արտաքին քաղաքականության ոլորտների ամերիկյան և թուրքական ընկերություններ, փորձագետներ: Առավել փոքր ծավալի խորհրդաժողովներ կազմակերպվում են յուրաքանչյուր ամիս, հաճախ ամիսը մի քանի անգամ: *ATC* կազմակերպության տարեկան բյուջեն կազմում է $1 մլն: *ATC-ն* նաև սահմանել է մրցանակ, որ տրվում է թուրք-ամերիկյան հարաբերությունների զարգացմանը նպաստած ամերիկյան պաշտոնյաներին՝ Զբիգնև Բժեզինսկի (անվտանգության հարցերով ԱՄՆ նախագահի խորհրդական), Դիք Չեյնի (փոխնախագահ, նախկին պաշտպանության նախարար), Ալեքսանդեր Հեյգ (պետքարտուղար), Ջորջ Շուլց (պետքարտուղար), Ռիչարդ Փերլ (ԱՄՆ պաշտպանության փոխնախարար), Էլիոթ Ռիչարդսըն (ԱՄՆ պաշտպանության փոխնախարար): *ATC* կառույցի մրցանակներ են ստացել նաև ԱՄՆ Կոնգրեսի անդամներ Ռոբերտ Բըրդը, Ջոն Թաուերը, Ռիչարդ Լյուգարը, Սթիվընն Սոլարզը, Թոմ Լանթոսը և ուրիշներ: Հատկանշական է, որ Թոմ Լանթոսը այժմ Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահն է, որտեղ 2007թ. հոկտեմբերի 10-ին հաստատվեց Հայոց ցեղասպանության վերաբերյալ օրինագիծը: Լանթոսը կողմ էր քվեարկել, ինչը, հասկանալի պատճառով, «ցնցել» էր թուրքական կողմին [9, p. 232]: Առավել ևս, որ Լանթոսը նաև Կոնգրեսի թուրքական հարցերով հանձնախմբի անդամ է:

2. Միացյալ Նահանգների ադրբեջանական կազմակերպությունները

Սեփական «սփյուռքի» ձևավորման ուղղությամբ պաշտոնական Բաքվի աշխատանքը նորագույն իրողություն է: Գործընթացն էապես ակտիվացել է 1999-ից սկսած: 2001թ. Բաքվում տեղի ունեցավ աշխարհի ադրբեջանցիների 1-ին համագումարը, 2006-ին՝ 2-րդը: 2002թ. հուլիսի 5-ին Հեյդար Ալիևի հրամանով ձևավորվեց Արտերկրում բնակվող ադրբեջանցիների հետ աշխատանքային պետական կոմիտեն, որից հետո համայնքների կազմակերպման գործընթացը մտավ որակապես նոր փուլ: Դա հստակ երևակվում է կոնկրետ օրինակներով՝ Ուկրաինայում գործում են 2 տասնյակից ավելի ադրբեջանական միություններ. բոլորը հիմնադրվել են 1999-2000թթ., Շվեյցարիայի 5 ադրբեջանական համայնքային միություններից 3-ը հիմնվել են 2000-ից հետո, Նիդեռլանդների 4 ադրբեջանական կառույցներից 3-ը հիմնվել են 2003-2004թթ., Միացյալ Արաբական Էմիրություններում, Չեխիայում, Եգիպտոսում գործող մեկական ադրբեջանական համայնքային կառույցները հիմնադրվել են 2002-2004թթ.:

Միացյալ Նահանգներում գործում են 11 ադրբեջանական համայնքային հաստատություններ, որոնցից 6-ը հիմնվել են 2002-2004թթ.: Մեկ ադրբեջանական համայնքային կառույց՝ ԱՄՆ ադրբեջանական համայնքը, հիմնադրվել է 1957թ.՝ հանդիսանալով տվյալ ժամանակաշրջանում արտերկրում գործող եզակի ադրբեջանական համայնքային հաստատություն: Կառույցը հիմնվել է Նյու Ջերսի նահանգում, մուսավաթական Ադրբեջանի հիմնադիր և առաջին վարչապետ Մեմեդ Էմին Ռասուլզադեի կողմից, որը տվյալ ժամանակաշրջանում բնակվել է ԱՄՆ-ում: Որպես հիմնադրման նպատակ նշվում էր «ԱՄՆ-ում բնակվող ադրբեջանցի երեխաների մեջ հայրենասիրական զգացումների դաստիարակությունը, պատմության ուսուցանումը»: Ներկայումս *ASA-ի* կենտրոնակայանը գտնվում է Նյու Յորքում, կառույցի ղեկավարն է Թոմրիս Ազերին: Ըստ որոշ տվյալների՝ վերջինիս պապը Մ.Ռասուլզադեի կաբինետում զբաղեցրել է Ազգային անվտանգության նախարարի պաշտոնը [13]:

«Թեև ԱՄՆ ադրբեջանական լոբբին դեռ աճում և զարգանում է, մենք ջանքեր ենք գործադրում, որպեսզի նույնքան կարևոր լինենք, որքան հրեական կամ թուրքական լոբբիները: Որպես ամերիկաբնակ ազերիներ մենք աշխատում ենք տարբեր հարթություններում կարևոր կապեր հաստատել ԱՄՆ իշխանությունների և դաշնային կառավարության ճյուղերի հետ: Ձգտում ենք կառուցել ուժեղ և ազդու լոբբի, որը համեմատելի և արդյունավետ կլինի, ինչպես ԱՄՆ մյուս էթնիկ միությունները»,- նշում է Ազերին [13]: 2006թ. գարնանը Ադրբեջանում տեղի ունեցած Աշխարհի ադրբեջանցիների

2-րդ համագումարին Ադրբեջանի նախագահը Փառքի շքանշան է հանձնել *ASA-ի* ղեկավար Ազերիին [14]:

ASA կազմակերպության նախաձեռնությամբ Գյանջա և Նյու Ջերսի նահանգի Նյուարքի քաղաքները դարձել են քույր քաղաքներ: *ASA-ն* նաև զբաղվում է ԱՄՆ-ում ադրբեջանցի ուսանողների կրթության հարցերով: Այն նաև Ադրբեջանի անկախության օրը միջոցառում է անցկացրել Նյու Յորքում:

ԱՄՆ մյուս ադրբեջանական կառույցներն են՝

- ԱՄՆ-Ադրբեջան առևտրային պալատ (Վաշինգտոն),
- ԱՄՆ-Ադրբեջան կրթական և մշակութային հիմնադրամ (Ինդիանա),
- Ադրբեջանի հրեաների միություն (Նյու Յորք),
- Ադրբեջան-ԱՄՆ մշակութային միություն (Նյու Յորք),
- Ադրբեջանական տուն (Լոս Անջելես),
- Ադրբեջանական մշակութային միություն (Սան Խոսե, Կալիֆոռնիա),
- ԱՄՆ-Ադրբեջան բարեկամության միություն (Անահայմ, Կալիֆոռնիա),
- «Մուղամ» մշակութային կենտրոն (Նյու Ջերսի),
- Միսուրի նահանգի ադրբեջանական համայնք,
- ԱՄՆ-Ադրբեջան փոխօգնության հիմնադրամ (Հյուսթոն, Տեխաս) [15]:

Հատկանշական է, որ 11 ադրբեջանական կազմակերպություններից 3-ը գործում են Կալիֆոռնիայում: Սույն փաստը, ինչպես նաև այն իրողությունը, որ հայաշատ Լոս Անջելեսում բացվել է ադրբեջանական հյուպատոսություն, խորհելու տեղ են թողնում Կալիֆոռնիայի հանդեպ ադրբեջանական կողմի հետաքրքրության պատճառների մասին:

ԱՄՆ-ում ոչ պարբերական հիմունքով հրատարակվում է նաև «Ազերբայջան ինթերնեյշընալ» ամսագիրը (խմբագրությունը նույնպես Կալիֆոռնիայում է):

ԱՄՆ-Ադրբեջան. առևտրային պալատ *(United States – Azerbaijan: Chamber of Commerce - USACC)* կազմակերպությունը Վաշինգտոնում է գործում: Հիմնադրվել է 1995թ.: Այն զբաղվում է Ադրբեջանում ամերիկյան ներդրումների խրախուսման, բիզնես-զարգացման հարցերով: Ամենամյա կտրվածքով հրատարակվում է Ադրբեջանում ներդրումների ուղեցույց: Կառույցի կայքէջում զետեղվում են Ադրբեջանին առնչվող բիզնես նորություններ: Կազմակերպության նախագահն է Սեյմուր Խալիլովը: Առևտրային պալատը ևս մրցանակներ է հանձնում այն պաշտոնյաներին, ովքեր նպաստում են Բաքու-Վաշինգտոն հարաբերությունների բարելավմանը: *USACC* մրցանակ են ստացել Ադրբեջանի վարչապետ Արթուր Ռասիզադեն, ԱՄՆ էներգետիկայի նախարար Ֆեդերիկո Փենան, Բաքվում ԱՄՆ նախկին

դեսպաններ Ռիչարդ Արմիթեջը և Սթենլի Էսկուդերոն, սենատորներ Սեմ Բրաունբեկը, Ռոբերտ Բըրդը, Ռիչարդ Լյուգարը, ԱՄՆ փոխնախագահ, նախկին պաշտպանության նախարար Դիք Չեյնին և այլք [16]: Վերջին 3-ը մրցանակ են ստացել նաև *ATAA-ից:*

ԱՄՆ ադրբեջանական կառույցներից ուշագրավ է նաև Նյու Յորքում գործող Ադրբեջանի հրեաների միությունը, որը հիմնականում Բաքվից ԱՄՆ փոխադրված հրեաների կառույց է: Ղեկավարն է Յակով Աբրամովը: Նշված կառույցը, թերևս, տեղին է դիտարկել հրեական համայնքային միությունների և բուն Իսրայելի հետ սերտանալու՝ պաշտոնական Բաքվի «անթաքույց» ձգտման համապատկերում: Ակնհայտ է, որ, մասնավորապես, ԱՄՆ-ում զուտ ժողովրդագրական տարբերության, հայկական համայնքի առավելապես ինտեգրված լինելու, ամերիկահայության մոտ գործող որոշակի ավանդույթների, համահայկական ընդգրկում ունեցող մի շարք կառույցների (Հայ Առաքելական եկեղեցի, ՀՅԴ, ՀԲԸՄ) առկայության պայմաններում Բաքվի, ինչպես նաև Անկարայի համար զգալիորեն բարդանում է հայկական սփյուռքին հակակշռելու գերխնդիրը: Այլ հարց է, որ նշված իրողությունը, տիպական լինելով որոշ երկրների պարագայում (ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա և այլն), կարող է չգործել այլ պետություններում, որտեղ Թուրքիան և Ադրբեջանն ակտիվանալու հավելյալ հնարավորություն են ստանում: Այսպիսով, ԱՄՆ-ում թե՛ Թուրքիան և թե՛ Ադրբեջանը դրսևորում են հրեական լոբբիստական միությունների հետ սերտանալու, համատեղ հանդես գալու ընդգծված ձգտում: Ադրբեջանի հրեաների միությունը տեղավորվում է հրեական միությունների հետ «բարեկամանալու» և վերջիններիս «հաճոյանալու» Բաքվի այս ռազմավարության տրամաբանության մեջ:

2006-ից ադրբեջանական «սփյուռքի» հարցերով պետկոմիտեի աջակցությամբ սկսվել է ԱՄՆ ադրբեջանական կազմակերպությունների համագումարի հիմնադրման աշխատանքը: Այն կդառնա ԱՄՆ ադրբեջանական միությունների «հովանին»՝ իր մեջ միավորելով բոլոր համայնքային ինստիտուտները: Նոր կառույցի կենտրոնակայանը գործելու է Վաշինգտոնում:

3. ԱՄՆ թուրքական և ադրբեջանական լոբբիների մերձեցման գործընթացը

Տարեցտարի խորանում է Միացյալ Նահանգների թուրքական և ադրբեջանական համայնքային կառույցների գործակցությունը: Շփումների սկիզբը դրվեց դեռևս ԽՍՀՄ-ի օրոք. 1990թ. Բաքու էր այցելել *ATAA-ի* պաշտոնյաներից Էրջյումենթ Քըլըչը, հանդիպել Խորհրդային Ադրբեջանի ղեկավարներին: 2004թ. Քըլըչն արդեն որպես *ATAA-ի* նախագահ կրկին այցելեց Բաքու, հանդիպեց նախագահ Իլհամ Ալիևին, մեջլիսի այն ժամանակվա խոս-

նակ Մուրթուզ Ալեսքերովին [17]: 2006թ. հունիսին Բաքու այցելեց և հանդիպումներ ունեցավ *ATAA* ևս մեկ պատվիրակություն՝ Վուրալ Ջենգիզի գլխավորությամբ: «Հայերին պետք է պատասխանենք թուրք-ադրբեջանական միությունների սերտ գործակցությամբ»,- հայտարարել էր Ջենգիզը [18]: Վերոնշյալ Արտերկրում բնակվող ադրբեջանցիների հետ աշխատանքային պետական կոմիտեի ղեկավար Նազիմ Իբրահիմովը նույն ոգով հայտարարել էր, թե «հայկական լոբբինգի աշխատանքին հակադրվելու միակ ուղին ադրբեջանական և թուրքական «դիասպորաների» միասնականացումն է» [19]:

2004-ից սկսած՝ *ATAA* կազմակերպության ամենամյա ընդլայնված նիստին մեկ օր հատկացվում է Ադրբեջանին [20]: 2005-ից *ATAA-ն* կազմակերպում է ԱՄՆ-ում կրթություն ստացող ազերի ուսանողների պրակտիկան ԱՄՆ Կոնգրեսում: ԱՄՆ հայկական միություններն այդ աշխատանքը սկսել էին դեռևս 1970-ականներից:

Հատկանշական է, որ *ASA* ադրբեջանական համայնքային կառույցը ինչպես *ATAA-ի,* այնպես էլ *FTAA-ի* բաղադրիչ կազմակերպությունն է: *ATAA-ն* նաև նշված է վերոնշյալ պետկոմիտեի կայքում՝ որպես ԱՄՆ-ում գործող ադրբեջանական կազմակերպություն, ինչը փոքր-ինչ անտրամաբանական է: *ASA-ի* ղեկավար Թոմրիս Ազերին նաև *ATAA-ի* Նյու Յորքի տարածաշրջանի պատասխանատուն է, միաժամանակ՝ «զուգահեռ» գործող *FTAA-ի* վարչական խորհրդի անդամ: *ATAA-ի* տեղեկագրերում դրվատանքով է խոսվում Ազերիի մասին: «Նրա ջանքերի շնորհիվ *ASA-ն* ակտիվորեն մասնակցում է մայիսի 29-ին թուրքական շքերթի կազմակերպմանը, կանոնավոր մասնակցում է թուրք-ադրբեջանական միջոցառումներին»,- նշված է հայտարարության մեջ:

Երկու երկրների լոբբիստական աշխատանքի ակտիվացման, հետագա ռազմավարության մշակման նպատակով 2007թ. մարտին Բաքվում տեղի ունցավ ադրբեջանական և թուրքական համայնքային կազմակերպությունների ֆորում, որին մասնակցել են *ASA, ATAA և FTAA* կառույցները: Թոմրիս Ազերին իր խոսքում, մասնավորապես, նշել էր. «Ադրբեջանական և թուրքական համայնքների այս ֆորումը կարևոր դերակատարում է ունենալու Ադրբեջանի դեմ հայկական ագրեսիայի և Թուրքիայի դեմ անհիմն պնդումների վերաբերյալ աշխարհին իսկությունը փոխանցելու գործում»: Թուրք-ադրբեջանական լոբբիստները շփվում են նաև ավանդական դարձած Թյուրքախոս պետությունների համագումարների ընթացքում, որոնց ներկայացված են լինում Թուրքիայի, Ադրբեջանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Ղրղզստանի, Թուրքմենստանի, Մոնղոլիայի և Տաջիկստանի պատվիրակությունները, ներկայացուցիչներ տարբեր պետություն-

ների թուրք-ադրբեջանական համայնքներից: 2007թ. նոյեմբերի 17-19-ին թյուրքախոս պետությունների 11-րդ համագումարն առաջին անգամ ընթացավ Բաքվում (մինչև այդ 10 համագումար հյուրընկալել էր Թուրքիան): Միջոցառմանը մասնակից Թոմրիս Ազերին վերստին նշել էր, որ ԱՄՆ ադրբեջանական կառույցները հրաշալի հարաբերություններ ունեն ԱՄՆ թուրքական և հրեական միությունների հետ: Ինչպես թուրքական, այնպես էլ հրեական միությունների ներկայացուցիչները ներկա էին *ASA*-ի հիմնադրման 50-ամյակին նվիրված միջոցառումներին (2007թ. հոկտեմբեր): ԱՄՆ այն համալսարաններում, ուր ուսանում են ադրբեջանցի ուսանողներ, գործում են ադրբեջանական ուսանողական խմբակներ, որոնք համագործակցում են թուրքական խմբերի հետ:

Իսկ ԱՄՆ-ում բնակվող ադրբեջանցի գործարար Ջեյհուն Մոլլազադեն նույն միջոցառման ժամանակ հայտարարել էր, թե «ադրբեջանական և ԱՄՆ-ում ու Եվրոպայում բնակվող մյուս թյուրքախոս ժողովուրդների համայնքների միջև գործակցության համակարգումը կհակակշռի հայկական սփյուռքի ուժը»:

Նշենք նաև, որ *ASA*-ի կայքում զետեղված են թուրքական զույգ «հովանի» միությունների լինքերը, իսկ *ATAA*-ի կայքում առանձնացված է բաժին, որն արտահայտում է ԼՂ հակամարտության վերաբերյալ ադրբեջանական դիրքորոշումը:

ԱՄՆ-ում թուրք-ադրբեջանական գործընկերության կապակցությամբ Լոս Անջելեսում Ադրբեջանի հյուպատոս Էլին Սուլեյմանովը նշում է. «Մենք սերտորեն համագործակցում ենք ԱՄՆ թուրքական համայնքի և Լոս Անջելեսի թուրքական հյուպատոսության հետ: Ակտիվորեն մասնակցում ենք այն միջոցառումներին, որոնք կազմակերպում է թուրքական կողմը, իսկ իրենք մասնակցում են մեր ձեռնարկներին» [21]:

Երկու թյուրքական լոբբիների մերձեցման խոսուն վկայություն է այն փաստը, որ Կոնգրեսում գործող թուրքական հարցերով հանձնախմբի և ադրբեջանական հարցերով հանձնախմբի անդամների զգալի մասը նույնն է:

Թուրքական հարցերով հանձնախումբը ձևավորվել է 2001թ., իսկ ադրբեջանականը, որ կոչվում է Ադրբեջանի բարեկամների խումբ, 2004թ. մարտին, Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիևի ԱՄՆ այցի ժամանակ: Երկու ամիս անց՝ 2004թ. մայիսին, երբ Կոնգրեսի ադրբեջանական հանձնախմբի հիմնադիր և ղեկավար, Փենսիլվանիա նահանգից կոնգրեսական Կուրտ Ուելդոնն այցելեց Բաքու, հանձնախումբն ուներ միայն 8 անդամ, 2006թ. հունիսի դրությամբ՝ 17, իսկ 2007թ. նոյեմբերին կոնգրեսականներ Ռոբերտ Կրամերի (դեմոկրատ, Ալաբամա), Հենրի Բրաունի (հանրապետական, Հարավային Կարոլինա) և Մայք Կոնովոյի

(հանրապետական, Տեխաս) միացումից հետո անդամների թիվը հասավ 26-ի [22]: Ադրբեջանական հանձնախմբի համանախագահներ Սոլոմոն Օրտիսը (դեմոկրատ, Տեխաս) և Բիլ Շաստերը (հանրապետական, Փասադենա) նաև թուրքական խմբի անդամներ են: Թուրքական հանձնախումբը ներկայումս ունի 70 անդամ, համանախագահներն են Քեյ Գրանգերը (հանրապետական, Տեխաս), Ռոբերտ Ուեքսլերը (դեմոկրատ, Ֆլորիդա) և Էդ Ուիթֆիլդը (հանրապետական, Քենթակի): Համեմատության կարգով նշենք, որ Հայկական հարցերով հանձնախումբը ձևավորվել է 1990թ. և ներկայումս ունի 156 անդամ:

Ադրբեջանական հանձնախմբի համանախագահ Բիլ Շաստերը 2007թ. փետրվարի 15-ին Կոնգրեսում ելույթ ունեցավ Խոջալիի իրադարձությունների թեմայով: Նա խուսափեց կատարվածը բնորոշել «ցեղասպանություն», ինչպես ընդունված է Ադրբեջանում, սակայն զոհերի և վիրավորների թվի հարցում ելույթը համահունչ էր ադրբեջանական ուռճացված ցուցանիշներին: Շաստերը ադրբեջանամետ շեշտադրումներով խոսեց նաև փախստականների թվի, ԼՂՀ-ն օղակող անվտանգության գոտու թեմաներով [23]:

Թուրք-ադրբեջանական հանձնախմբերի անդամ Դեն Բարթոնը (Ինդիանա նահանգ) նախորդ գումարման խորհրդարանում 2005թ. փետրվարի 18-ին ևս հանդես էր եկել Խոջալիի իրադարձությունների թեմայով: Նա հայտարարել էր, թե «վիճելի Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կոչ անող պալատի անդամները չեն անդրադառնում պատերազմի ընթացքում հայերի կողմից իրականացված ադրբեջանցիների էթնիկ զտումների խնդրին» [24]: Ավելի ուշ Բարթոնը ևս մեկ անգամ Ներկայացուցիչների պալատում բարձրաձայնեց ադրբեջանական կեղծ թեզը՝ խոսելով Արցախի պատմական պատկանելության խնդրի շուրջ. «Որքանով ես տեղյակ եմ, Լեռնային Ղարաբաղը երբևէ չի հանդիսացել Հայաստանի բաղկացուցիչը»,- նշել էր իրականում պատմությունից անտեղյակ կամ անտեղյակ ձևացող կոնգրեսականը: «Խորապես մտահոգվում եմ, երբ լսում եմ, որ իմ որոշ գործընկերներ վիրավորում են ադրբեջանցիներին և այս բարդագույն հարցի ողջ պատասխանատվությունը փորձում դնել նրանց ուսերին»,- հայտարարել էր Բարթոնը՝ նկատի ունենալով Կոնգրեսի Հայկական հարցերով հանձնախմբի անդամներին [25]:

Դեն Բարթոնին արձագանքել էր *ASA-ն*՝ նշելով. «Չնայած ճնշումներ կիրառող ամերիկահայ քաղաքական խմբերի կեղծ քարոզչությանը և Կոնգրեսում նրանց վարձու ներկայացուցիչների ջանքերին, ինչպիսիք են Փալոնը, Նոլենբերգը և այսպես կոչված Հայկական հանձնախմբի այլ անդամներ, ԱՄՆ պետքարտուղարությունը ԼՂ-ն ճանաչում է որպես Ադրբեջանի բաղկացուցիչ, ինչպես և ՄԱԿ յուրաքանչյուր պետություն» [25]: Ադրբեջանի

բարեկամ գործիչների հայտարարություններին մշտապես հակազդում է ԱՄՆ Հայ դատի գրասենյակը: Կոնգրեսի բոլոր անդամներին հղված ուղերձում ամերիկահայ կառույցը շեշտում էր, որ Դեն Բարթոնը հիմնավորապես խեղաթյուրում է պատմությունը, ԼՂ կարգավիճակի գործոնը և անտեսում ինքնորոշման իրավունքը [9, pp. 230-231]: Այսպիսով, կարելի է արձանագրել, որ ԱՄՆ հայկական միությունները հարկադրված են հակահարված տալ ոչ միայն թուրքական լոբբիին, որը մի քանի տասնամյակի պատմություն ունի, այլ նաև ադրբեջանական լոբբինգին, որը բառացիորեն ծագում և «հասակ է առնում»: Իսկ երկու լոբբիների հետագա սերտացման և սերտաճման հեռանկարը որևէ կասկածի տեղիք չի թողնում:

4. Թուրքական և ադրբեջանական կողմի աշխատանքը հայկական օրինագծի դեմ

2007թ. նոյեմբերին ԱՄՆ Կոնգրեսի ընտրություններում դեմոկրատների համոզիչ հաղթանակի և Կալիֆոռնիայից Ներկայացուցիչների պալատի անդամ, ԱՄՆ հայկական համայնքի հետ մոտ 20 տարի հարաբերություններ պահպանող Նենսի Փելոսիի խոսնակ ընտրվելը նոր հնարավորություն ստեղծեց ԱՄՆ Կոնգրեսում Հայոց Մեծ եղեռնի դատապարտման հարցն առաջ մղելու համար: Հունվարի 30-ին 4 կոնգրեսականներ Հայ դատի գրասենյակի ներկայացուցիչների ուղեկցությամբ այցելեցին Կոնգրես, ներկայացրին օրինագիծը, և այսպիսով խնդիրը մուտք գործեց վճռական փուլ: Մարտի 14-ին սենատորներ Ռիչ Դարբինը, (դեմոկրատ, Իլինոյս) և Ջոն Էնզայնը (հանրապետական, Նևադա) նույնանման օրինագիծ առաջադրեցին Սենատում:

2006թ. նոյեմբերի ընտրություններից սկսած՝ Անկարան նախապատրաստական աշխատանքներ սկսեց հերթական ճգնաժամին դիմակայելու և ճանաչման հնարավոր հեռանկարը խափանելու ուղղությամբ: Թուրքիայից ԱՄՆ լոբբինգ իրականացնելու նպատակով 4 անգամ մեկնել է խորհրդարանականների «դեսանտը»: Թուրքական մեջլիսի ամենաակտիվ դիվանագետը իշխող Արդարություն և զարգացում կուսակցությունից Էգեմեն Բաղըշն է, որ ունի ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանատանն աշխատանքի փորձ, կապեր ԱՄՆ իշխանական շրջանակներում, ԱՄՆ թուրքական համայնքում: Օգոստոս և նոյեմբեր ամիսներին Միացյալ Նահանգներ է այցելել Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանը: 2006թ. փետրվարին ԱԳ նախարարի կարգավիճակով Վաշինգտոն է մեկնել Աբդուլահ Գյուլը, ապա նաև Ալի Բաբաջանը, նաև Թուրքիայի բանակի գլխավոր շտաբի պետ Յաշար Բյույուքանըթը:

Փետրվարին Թուրքիա այցելեց 6 կոնգրեսականներից բաղկացած

պատվիրակությունը: Վերստին շեշտելով, որ ճանաչումը կվնասի Թուրքիա-ԱՄՆ հարաբերություններին, պատվիրակության անդամ Նորման Դիքսը (դեմոկրատ, Վայոմինգ) հայտարարել էր, թե «ամերիկաբնակ թուրքերը հայկական համայնքի ներկայացուցիչների համեմատությամբ շատ ավելի պասիվ են: Մեր բոլորի ընտրատարածքներում էլ հայ բնակիչներ կան: Մշտապես միջնորդում են, անընդհատ հեռախոսազանգեր ենք ստանում: Բայց ոչ մի թուրք ինձ չի զանգել ասելու՝ օրինագծին դեմ քվեարկեք կամ պարզաբանեք խնդրի էությունը» [26]: Ճիշտ նույն օրն ԱՄՆ-ում ամերիկա-թուրքական կառույցների անդամների հետ հանդիպմանը կոնգրեսականները հայտարարել էին, որ ամերիկաբնակ թուրքերը բավարար չափով ակտիվ չեն: Չիկագոյի թուրք-ամերիկյան միության, Չիկագոյի թուրք-ամերիկյան առևտրային պալատի և «Նիագարա» ամերիկա-թուրքական ընկերության անդամները հանդիպել էին ընդհանուր առմամբ 6 կոնգրեսականների և 12 կոնգրեսականների օգնականների: Պատվիրակության անդամ Գյուզելդերեի խոսքով՝ վերջիններս հարցնում էին՝ որտեղ էիք մինչև այսօր: «Ի դեմս մեզ առաջին անգամ էին թուրքերի տեսնում»,- ամերիկյան կոնգրեսականների տպավորությունն է փոխանցել Գյուզելդերեն: Կառույցի անդամները 70 էջից բաղկացած թուրքական մերժողական մենագրություններ են բաժանել կոնգրեսականներին [10]:

Նույն օրերին Նյու Յորքի Մանհեթեն թաղամասի Թուրք-ամերիկյան մշակութային միությունում թուրքական համայնքի հետ հանդիպմանը Աբդուլահ Գյուլը հայտարարել է. «Երբեմն մենք չենք կարող այնքան ազդեցիկ լինել, որքան հասարակական միությունները: Ես որպես նախարար խոսելիս արտահայտում եմ պաշտոնական դիրքորոշում: Մինչդեռ Ձեր աշխատանքը կամավորության հենքի վրա է, և նրա ներգործությունն էլ այլ է» [10]: Իսկ սեպտեմբերի 21-ին արդեն Թուրքիայի հաջորդ ԱԳ նախարար Բաբաջանը, հանդիպելով ԱՄՆ թուրքական միությունների հետ, հորդորեց միասնական գործել և ակտիվացնել աշխատանքը հայկական օրինագծի դեմ: Հետաքրքրական է նաև Բաբաջանի կոչն՝ ուղղված ԱՄՆ-ում բնակվող այն էթնիկ թուրքերին, որոնք դեռևս ԱՄՆ քաղաքացի չեն, ստանալ քաղաքացիություն [27]: Այս պարագայում, թերևս, գործ ունենք թուրքական ռազմավարական մի մոտեցման հետ, ըստ որի՝ պետք է ավելացնել ԱՄՆ թուրք քաղաքացիների թվաքանակը:

Բացի ներհամայնքային կազմակերպումից և վերջիններիս միջոցով ճնշում բանեցնելուց, ինչպես նաև Անկարա-Վաշինգտոն ուղղակի շփումների մարտավարություններից, Թուրքիան լայնորեն օգտվում է նաև ԱՄՆ-ում գործող լոբբիստական մասնավոր ընկերությունների ծառայություններից, ինչն ամերիկյան օրենսդրության շրջանակում է:

«Քանի որ ԱՄՆ-ում բավարար չափով թուրքեր չկան, եղածներն էլ ինքնակազմակերպված չեն, Թուրքիան ձգտում էր իր գործունեությունն իրականացնել ամերիկյան լոբբիստական կառույցների հետ»,- գրում են թուրք վերլուծաբանները [9, p. 220]:

Ըստ առկա փաստերի՝ Թուրքիան լոբբիստական գրասենյակների ծառայություններից օգտվում է 1981-ից: Հնարավոր է՝ թուրքական կողմին այս քայլին մղել է այդ թվականի ապրիլի 24-ին նախագահ Ռոնալդ Ռեյգանի ելույթում «Հայոց ցեղասպանություն» բառակապակցության կիրառումը: Անկարայի առաջին «կլիենտը» Ռոնալդ Ռեյգանին մոտ կանգնած հանրապետական Ռոբերտ Գրեյի կողմից ղեկավարվող *Gray and Company* ընկերությունն էր: Ուշագրավ է, որ 1982թ. կամ հետագա տարիներին նախագահ Ռեյգանն ապրիլի 24-ի ելույթում այլևս չկիրառեց «ցեղասպանություն» բառեզրը: 1984թ. *Gray and Company* կառույցը միավորվեց *Hill and Knowlton* լոբբիստական կազմակերպության հետ և 5 տարի միանձնյա իրականացրեց ԱՄՆ-ում Թուրքիայի լոբբինգը: Ի դեպ, *Hill and Knowlton-ի* ղեկավար մասում աշխատում էր էթնիկ թուրք Արզու Թունջաթը: 1989թ. Թուրքիան պայմանագիր ստորագրեց *International advisers* կառույցի, մեկ տարի անց նաև *McAulifee, Kelly, Rafaelli & Seimans* կազմակերպության, ապա *Fleishman Hillard-ի* հետ, ուր փոխադրվել էր վերոնշյալ Ա.Թունջաթը: Ենթադրվում է, որ վերջինս այդ ժամանակահատվածում համակարգում էր Թուրքիայի և ԱՄՆ լոբբիստական կառույցների հարաբերությունները [9, pp. 221-225]: 2000թ., երբ հարցը ԱՄՆ Կոնգրեսի օրակարգում էր Անկարայի շահերի հիմնական լոբբիստը *Livingston group* ընկերությունն էր, որի ղեկավարն էր Կոնգրեսի նախկին անդամ, հանրապետական Ռոբերտ Լիվինգստոնը: 2006թ. նոյեմբերյան ընտրություններից հետո, երբ հանրապետականները կորցրին մեծամասնությունը Կոնգրեսի թե՛ վերին, թե՛ ստորին պալատներում, անհրաժեշտություն առաջացավ, բացի *Livingston group*-ից աշխատել նաև դեմոկրատներին մոտ կանգնած կառույցի հետ: 2006թ. մարտին Թուրքիան համաձայնագիր կնքեց ամերիկյան *DLA Piper* վարձու կառույցի հետ:

2007թ. հոկտեմբերին «Նյու Յորք թայմզը» հրապարակեց ԱՄՆ Հայ դատի գրասենյակի տվյալները Թուրքիայի կողմից լոբբիստական աշխատանքի շրջանակում արվող ծախսերի մասին, որոնք ամերիկահայ կառույցը ձեռք էր բերել ԱՄՆ Արդարադատության նախարարությունից: 2000-2007թթ. ընթացքում Թուրքիան միայն *Livingston group-ին* վճարել է $13 մլն: Ներկայումս Վաշինգտոնում Թուրքիայի դեսպանատունը յուրաքանչյուր ամիս $105 հազար է հատկացնում այս ընկերությանը: 2007թ. ամռանը *Livingston group-ի* հետ $165 հազարով համաձայնագիր է կնքել նախկին կոնգրեսական Սթիվեն Սոլարզը: Նա կցվել է թուրքական լոբբիստական

աշխատանքին և, ըստ «Ռադիկալի», հայտարարել, թե «ամեն ինչ կանի օրինագծի խափանման համար» [28]: Ինչպես նշել ենք, Սոլարզը ժամանակին ստացել էր *ATAA* կազմակերպության մրցանակը:

Ռոբերտ Լիվինգստոնը ներկայիս հանրապետական վարչակարգից հատկապես սերտ հարաբերություններ ունի փոխնախագահ Դիք Չեյնիի և Ջորջ Բուշի նախկին խորհրդական Կառլ Ռոուվի հետ: Ռ.Լիվինգստոնն է միջնորդում, որ Վաշինգտոն մեկնող թուրք խորհրդարանականները հանդիպումներ ունենան Կոնգրեսում: Ըստ առկա տվյալների՝ նա անձամբ ուղեկցում է թուրք պատգամավորներին՝ վերջիններիս Կոնգրես այցի ժամանակ: *Livingston group* ընկերությունն աշխատել է հանրապետական կոնգրեսական Բոբի Ջինդալի և դեմոկրատ Ջոն Մուրթայի հետ, որպեսզի վերջիններս օրինագծի հարցում որդեգրեն ընդդիմադիր կեցվածք:

Ըստ «Նյու Յորք թայմզի» հոդվածի՝ *DLA Piper-ին* տարեկան վճարվում է $1,2 մլն: *Fleishman Hillard* ընկերությունը ևս շարունակում է աշխատել թուրքական կազմակերպությունների հետ: Վերջինիս Անկարան ամսական վճարում է $114 հազար: Ըստ մեկ այլ տվյալի՝ 2006թ. օգոստոսից սկսած՝ Թուրքիան վարձու լոբբիստական ընկերություններին վճարել է $3 մլն 200 հազար: Ակնհայտ է, որ առաջիկա տարիներին Անկարայի լոբբիստական ծախսերն աճելու են: Ենթադրաբար այս միությունների հետ համագործակցելու է նաև Ադրբեջանը:

«Ավագ եղբորը» սատարելու Ադրբեջանի փորձերն արտահայտվեցին ինչպես համայնքի ուժերով միջոցառումների կազմակերպման, այնպես էլ պաշտոնական Բաքվի ուղղակի ձեռնարկների՝ քաղաքական հայտարարությունների, դիվանագիտական դեմարշների տարբերակներով: Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում օրինագծի հաստատումից հետո հոկտեմբերի 12-ին հայտարարությամբ հանդես եկավ Ադրբեջանի արտգործնախարարությունը. «Ադրբեջանը որոշումը համարում է սխալ և սուբյեկտիվ և սատարում է Թուրքիայի կոչին՝ ուսումնասիրել Առաջին համաշխարհային պատերազմին առնչվող արխիվային փաստաթղթերը»: Պահանջելով Կոնգրեսի լիազումար նիստին ձեռնպահ մնալ փաստաթղթի քննարկումից՝ Ադրբեջանի արտաքին գերատեսչությունն այնուհետև անդրադառնում էր «Խոջալիի խնդրին և ՀՀ-ին մեղադրում Ադրբեջանի դեմ ահաբեկչության, իսկ սփյուռքահայությանը՝ ագրեսիվ քարոզչություն իրականացնելու մեջ» [29]: Ադրբեջանի ԱԳՆ խոսնակ Խազար Իբրահիմն իր հերթին նշել է. «Ադրբեջանը պետական մակարդակով մեծ աշխատանք է կատարում ԱՄՆ-ում հայկական քարոզչական մեքենայի չեզոքացման ուղղությամբ: Ադրբեջանը ԱՄՆ կառավարական, վարչական և օրենսդիր կառույցների հետ հարաբերությունների ռազմավարություն է

մշակել, որում հաշվի են առնվել նաև եղբայրական Թուրքիայի հետաքրքրությունները: Ադրբեջանը միշտ համակողմանիորեն աջակցել և աջակցելու է Թուրքիային, ինչպես որ Թուրքիան աջակցում է Ադրբեջանին» [30]:

«Արդարությունը Թուրքիայի և Ադրբեջանի կողմն է, և Թուրքիայի հանդեպ անարդար վերաբերմունքին պետք է վերջ տալ,- հայտարարել է Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևը:- Դա մեծ կեղծիք է և պատմության խեղաթյուրում, որի հետևում կանգնած են Հայաստանը, սփյուռքը և աշխարհի հայությունը» [31]: Իսկ նոյեմբերի 17-19-ը Բաքվում տեղի ունեցած Թյուրքախոս պետությունների և համայնքների բարեկամության 11-րդ խորհրդաժողովին Անկարայի և Բաքվի նախաձեռնությամբ ընդունվեց դիմում միջազգային խորհրդարաններին, որով կոչ էր արվում Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը թողնել պատմաբաններին [32]:

Անցնող ամիսներին թուրքական կողմին հաջողվեց մի խումբ կոնգրեսականների տարհամոզել աջակցել Հայոց ցեղասպանության օրինագծին: Փետրվարին, երբ աջակիցների թիվը 179 էր, 2 կոնգրեսական հետ վերցրին իրենց ստորագրությունները [33]: Այնուհետև հրաժարվեցին ևս 4, իսկ հոկտեմբերի 10-ից հետո՝ ևս 11 կոնգրեսական: Թուրքական կողմին, վերջին փուլում նաև ամերիկյան իշխանությունների հետ գործակցության միջոցով, հաջողվեց աջակիցների թիվը նվազեցնել 17-ով: Հայտնի է, որ մասնավոր դեպքերում ԱՄՆ հայկական համայնքն իր հստակ վերաբերմունքն արտահայտեց «դասալիք» կոնգրեսականների նկատմամբ: Մասնավորապես, Կալիֆոռնիայի 36-րդ ընտրատարածքից կոնգրեսական Ջեյն Հարմանի գրասենյակի առջև հայկական համայնքը 2 անգամ բողոքի միջոցառում է կազմակերպել: Միաժամանակ, նոյեմբերի 11-ին, Հարմանին են հանդիպել Կալիֆոռնիայի ադրբեջանական համայնքի ներկայացուցիչները և երախտագիտություն հայտնելով՝ նվիրել «Խոջալիի ցեղասպանության» և «գրավյալ տարածքներում ոչնչացված ադրբեջանական հուշարձանների» մասին պատմող «ուսումնասիրություններ» [34]: Ներկայումս Հայոց ցեղասպանության ճանաչման փաստաթղթին են աջակցում ներկայացուցիչների պալատի 435 անդամներից 211-ը, հոկտեմբերի 10-ի նախօրեին նրանց թիվը 227 էր:

«Ադրբեջանական և թուրքական համայնքները, իրենց գործընկերները և Բուշի վարչակարգը կարողացան հասնել նրան, որ օրինագծի օգտին ստորագրած շատ կոնգրեսականներ հետ վերցրին իրենց ստորագրությունները: Դա վառ օրինակ է, թե ինչպես մեր համայնքները կազմակերպված պայքարի արդյունքում և ԱՄՆ շահերը նկատի ունենալով՝ հասնում են հաջողության: Եթե նախկինում մեր համայնքները չէին կազմակերպում նման աշխատանք, ապա 2007թ. կատարված աշխատանքն ունի հսկայական ռազմավարական նշանակություն ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայում

թյուրքական լոբբինգի կազմակերպման առումով»,- նշում է ադրբեջանցի գործարար Ջեյհուն Մոլլազադեն:

Օրինագծի աջակիցների թվում առաջացած այս «տեղատվությունը» Կոնգրեսի թուրքական հանձնախմբի անդամ Ջոն Մուրթային հիմք տվեց հայտարարել, թե «այսօր քվեարկության դնելու դեպքում օրինագիծը կմերժվի» [35]: Այնուհանդերձ, առկա մի շարք այլ տեղեկությունների համադրությունից հետևում է, որ իրավիճակը Կոնգրեսում ամենևին այդպիսին չէ, և քվեարկության դրվելու պարագայում փաստաթուղթը կհաստատվի ձայների պարզ մեծամասնությամբ: Հակառակ պարագայում Թուրքիան ինքը պետք է շահագրգռված լիներ, որ օրինագիծը քվեարկության դրվեր և մերժվելով խնդիրը փակվեր:

Հատկանշական է, որ փաստաթղթին դեմ արտահայտվող ԱՄՆ ղեկավար պաշտոնյաները՝ նախագահ, պետքարտուղար, զինվորական ղեկավարություն կամ կոնգրեսականներից որևէ մեկը, չէր մերժում ինքնին ցեղասպանության փաստը. նշվում էր, թե դա կվտանգի Իրաքում և Աֆղանստանում ամերիկյան զորակազմի զինծառայողներին: ԱՄՆ 8 նախկին պետքարտուղարներն օրինագիծը չհաստատելու վերաբերյալ Կոնգրեսին հղած նամակում ևս հանդես եկան այս փաստարկով:

ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը 2007թ. հոկտեմբերին ԱՄՆ կատարած այցի ժամանակ նշեց, թե որևէ ամերիկյան պաշտոնյա չմերժեց ցեղասպանության իրողությունը: Ցեղասպանության կանխարգելման օպերատիվ խումբ կազմակերպության ղեկավարներ, ԱՄՆ նախկին պաշտպանության և արտաքին գործերի նախարարներ Ուիլյամ Քոհենը և Մադլեն Օլբրայթը ևս նշում են, թե «մտահոգ են 1915-23թթ. հայերի զանգվածային սպանություններով» ու, թեև չեն կիրառում ցեղասպանություն բառեզրը, բայց նաև չեն մերժում այս փաստը՝ կրկնելով ամերիկյան հետաքրքրությունները չվտանգելու թեզը:

«Փաստ է, որ բոլորս մտահոգ ենք 1915-23թթ. տեղի ունեցած սպանությունների և մարդկային տառապանքի ծավալներով: Նաև տեղին է հիշեցնել, որ այս պահին մենք ներքաշված ենք պատերազմական գործողությունների մեջ: Եվ մենք հաշվարկեցինք, որ օրինագծի քննարկումը կարող է առաջացնել թուրքական կառավարության այնպիսի արձագանք, որը մեր որդիներին և դուստրերին կդնի առավել վտանգավոր կացության մեջ»,- նշում է Ուիլյամ Քոհենը: Անդրադառնալով 2000թ. Կոնգրեսում նույնանման օրինագծին իր ընդդիմանալու իրողությանը՝ վերջինս շարունակում է. «Մենք բոլորս խոսում ենք քաղաքական նպատակահարմարության մասին: Պաշտպանության նախարար աշխատած ժամանակ ես պատասխանատու էի զինված ուժերում ծառայող յուրաքանչյուր տղամարդու և կնոջ համար:

Եվ ես պետք է վճռեի՝ արդյոք նրանց առավել մեծ վտանգի չեմ ենթարկում՝ կատարելով հայտարարություններ 1915-23թթ. իրադարձությունների վերաբերյալ» [36]:

ԱՄՆ Հայ դատի գրասենյակի պատասխանատուները նաև նշում են, որ եթե Կոնգրեսում մնացել է մեկ կոնգրեսական, որը պատրաստ է հայտարարել, թե հայերի ցեղասպանություն ընդհանրապես չի եղել, այդ միակ բացառությունը տխրահռչակ Դեն Բարթոնն է: Այսպիսով, չնայած իշխանությունների և թուրք-ադրբեջանական երկյակի ուժգին դիմադրությանը, պետք է արձանագրել, որ ԱՄՆ-ում առկա է լուրջ տեղաշարժ Հայոց ցեղասպանության հիմնախնդրի շուրջ. դա մերժողականության «դարաշրջանի» ավարտն է, որոշակի արժեքային համակարգի ձևավորումը, հարցի հանդեպ քաղաքական և հասարակական շրջանակների, ԶԼՄ հետաքրքրության զգալի աճը: Դրանք կարևոր գործոններ ու նախադրյալներ են, և իրողությունը, որ Հայոց Մեծ եղեռնի ամերիկյան ճանաչման հարցում ժամանակն աշխատում է ի վնաս Թուրքիայի ու թուրք-ադրբեջանական լոբբինգի, կասկածի տեղիք չի թողնում:

Այսպիսով, ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության վերաբերյալ օրինագծի հաստատումը գործնականում անխուսափելի է:

Նոյեմբեր, 2007թ.

Աղբյուրներ և գրականություն

1. turkishcoalitionofamerica.org.
2. http://www.ataa.org/about.
3. http://adl.hayway.org/default_zone/gb/html/page3401.html, նաև «Diasporaya karsi hukuk mucadelesi», Sukran Pakkan, «Milliyet», 04.06.2005.
4. «Amerika'da Siyasal Yapi: Lobiler ve Dis Politika: Turk, Yunan, Ermeni, Israil ve Arap Lobilerin ABD'nin Dis Politikasina Etkileri», Tayar Ari, Istanbul, 2000.
5. http://www.ataa.org/press/prletter_1107.html.
6. turkishcoalitionofamerica.org.
7. www.tadf.org.
8. «Turkler birbirini yerken Ermeniler mali goturuyor» Savas Sozal, «Yeni cag», www.yenicag.com.tr , 06.03.07.
9. «Amerika'da Siyasal Yapi: Lobiler ve Dis Politika: Turk, Yunan, Ermeni, Israil ve Arap Lobilerin ABD'nin Dis Politikasina Etkileri», Tayar Ari, Istanbul, 2000.
10. «Gonulluler ABDli vekilileri sasirtti: Turkler kapimizi hic calmamisti», «Zaman», 26.02.2007.
11. http://www.americanturkishsociety.org/aboutus.aspx.

12. «Turkish lobbies in US Stepping up Efforts», «Turkish Daily News», 18.09.2007, նաև Турецкое лобби активизируется, Эхо, 20.09.2007.
13. *Tomris Azeri:* «ATAA's Component Associations: Azerbaijan Society of America - ASA», «The Turkish Times», June 15, 2002.
14. www.ataa.org.
15. www.diaspora.az.
16. «USACC Freedom Support Award», www.usacc.org.
17. «Ассамблея турецких ассоциаций Америки обсудит с конгрессменами Карабахский вопрос», *Л.Нури,* Зеркало, 10.06.2004, նաև «Турки США подрывают мощь армянского лобби», Эхо, 10.06.2004.
18. «ATAA Needs Azerbaijan Support for not Losing Armenians», www.ans.az, 17.06.2006.
19. «Азербайджанская и турецкая диаспоры – обьединяйтесь», *Дж.Байрамова,* Зеркало, 29.09.2006.
20. «24th Congress of ATAA held discussions realed to Azerbaijan», www.azertag.com, 03.02.2004.
21. *Elin Suleymanov,* Azerbaijani Diaspora Should be More Active in Political Life of US, 07.09..2007, www.apa.az.
22. «Демократ из Алабамы вошел в рабочую группу Конгресса США по Азербайджану», Зеркало, 09.11.2007.
23. http://www.turkishcoalitionofamerica.com/community.html.
24. «Reppresentative from Indiana, member of international relations committee called to recognize The Khojaly genocide», ANS, www.ans.az, 20.02.2005.
25. «ASA commends congressman Burton for his speech on the house floor», www.azeris.org, 20.07.2006.
26. «Siz de lobi yapin», «Hurriyet», 26.02.2007.
27. «Foreign Minister Urges Turkish Community in USA to Oppose Armenian Bill», Anatolia news agency, Turkey, 21.09.2007.
28. «Turkiye'nin lobi skandali», Cumhuriyet, 18.10.2007 և «Turk lobisi sayesinde zengin olanlar», Radikal, 18.10.2007.
29. «МИД Азербайджана: Мы советуем Палате представителей Конгресса США воздержаться…», www.day.az, 12.10.2007.
30. «Азербайджан и Турция расчитывают на еврейское лобби в Конгрессе США, чтобы повлиять на вопрос геноцида армян», www.newsru.com, 11.10.2007.
31. «За безосновательными обвинениями в адрес Турции и Азербайджана стоит армянство мира», www.day.az, 06.11.2007.
32. «Сила тюркоязычных государств в единстве», Зеркало, 20.11.2007.
33. «Turkiye'yi dinleyen ABD'li senatorler imzalarini cekecek», Hakki Kurban, Tercuman օրաթերթ, 28.02.2007.
34. «Представители азербайджанксой диаспоры встретились с конгрессменом США», www.day.az, 12.11.2007.
35. «Ermeni Tasarisi Bugun Oylansa Gecmez», Hurriyet, 18.10.2007.
36. «Если это совершают наши друзья, то это не геноцид», www.genocide.ru, 18.10.2007.

ТУРЕЦКО-АЗЕРБАЙДЖАНСКИЙ АНТИАРМЯНСКИЙ ЛОББИНГ В США

Айкарам Наапетян

Резюме

Турецкая, равно как и азербайджанская общины Соединенных Штатов Америки активизируются из года в год. 2007-й в этом отношении был в некотором роде уникальным, поскольку в течение всего года в США на повестке дня был вопрос признания Геноцида армян в Конгрессе США. Анкара и Баку максимально усилили лоббистскую деятельность, однако 10 октября резолюция была принята на уровне Комиссии по международным вопросам Палаты представителей США. Отметим, что после принятия резолюции число сторонников «армянского законопроекта» несколько уменьшилось, авопрос окончательного принятия документа, по сути, отложен до 2008-го года, что является результатом подчеркнутой оппозиции Белого дома и Государственного департамента США и отчаянных попыток турецко-азербайджанских общин. Замедление процесса принятия резолюции инспирировало заявление проживающего в Калифорнии азербайджанского лоббиста Джейхуна Моллазаде о провале армянской резолюции, что является крайне поспешным заявлением. Однако сам процесс противодействия турецко-азербайджанских общин и официальной дипломатии резолюции по Геноциду дает возможность более детально изучить процессы активизации и становления турецко-азербайджанского лоббинга, их динамику и будущую стратегию.

Следует так же отметить, что в 2007г. усилиями азербайджано-турецких властей были организованы форум азербайджанских и турецких организации в Баку в марте и Съезд тюркоязычных стран в ноябре 2007г., где также одной их «магистральных» тем был вопрос совместного противостояния армянским организациям Спюрка.